

ՓՐԿՈՒԹՅԱՆ ՎՍՏԱՀՈՒԹՅԱՆ ԽՈՍՔ

Երբ սերն է խոսում: Յոթ խոսք խաչի վրա

Մաս 2

«Եվ այն կախված չարագործներից մեկը հայեցում էր նրան և ասում.
Եթե դու ես Քրիստոսը, փրկիր քո անձը և մեզ: Բսկ միշուսը
պատասխանեց սաստելով նրան՝ և ասեց. Եվ դու չե՞ս վախենում
Աստվածանից, որ հենց նույն պատժի մեջ ես: Ու մենք՝ իրավունքով
ենք պատժված. որովհետև մեր արած գործերին արժանի հատուցումն
ենք առնում. իսկ սա ոչ մի անտեղի բան չգործեց: Եվ ասեց Հիսուսին.
Տեր, ինձ հիշիր, երբոր գաս քո թագավորությունովը: Եվ Հիսուսը ասեց
նրան. Ճշմարիտ ասում եմ քեզ, Դու այսօր ինձ հետ դրախտումը
կլինես:» Դուկաս 23:39-43

Ի՞նչ պետք է անեմ ես, փրկվելու համար

5 փաստեր, որ մեռնողը մարդը գիտեր

1. Նա գիտեր, որ մեռնելուց հետո պիտի կանգնի Աստծո
առջև

«Եվ դու չե՞ս վախենում Աստվածանից, որ հենց պատժի մեջ ես:»
Դուկաս 23:40

«Մարդկանց համար սահմանված է մեկ անգամ մեռնել և նրանից
հետո դատաստանը:» Եբրայեցիս 9:27

2. Նա գիտեր, որ մեղանչել է Աստծո դեմ

«Եվ մենք՝ իրավունքով ենք պատժված. Որովհետև մեր արած
գործերին արժանի հատուցումն ենք առնում.» ...» Դուկաս 23:41

«Որովհետև մեխքի վարձքը մահն է. բայց Աստծո շնորհքը՝
հավիտենական կյանք՝ մեր Տեր Հիսուս Քրիստոսի ձեռովը:»
Հռովմայեցիս 6:23

3. Նա գիտեր, որ Հիսուսը ավելին է, քան մարդ

«...Բսկ սա ոչ մի անտեղի բան չգործեց:» Դուկաս 23:41

«Իրավ որ երկրի վրա արդար մարդ չկա, որ բարի գործի և չմաղանչի:»
Ժողովող 7:20

«Որովհետև Աստված, նրան որ մեղք չգիտեր, մեզ համար մեղք արավ.
որ մենք Աստծո արդարությունը լինենք նրանում:» Բ Կորնթացիս 5:21

4. Նա գիտեր, որ միայն Աստծո շնորհքը կարող է փրկել
իրեն

«Եվ ասեց Հիսուսին. Տեր ինձ հիշիր...» Դուկաս 23:42

«Որովհետև շնորհքով եք փրկված հավատքի ձեռովը. և սա ոչ թե
ձեզանից է, այլ Աստծո պարզն է. Ոչ թե գործերից, որ մեկը
չպարծենա:» Եփեսացիս 2:8-9

5. Նա գիտեր, որ Հիսուսը կարող է փրկել իրեն, եթե ինքը
խնդրի

«...Երբոր գաս քո թագավորությունովը:» Դուկաս 23:42

«Հավատա Տեր Հիսուս Քրիստոսին, և կփրկվես...» Գործք 16:31

Ինչպե՞ս կարող եմ վստահ լինել իմ փրկության համար

Աստծո խոսքը խոստանում է

«Եվ Հիսուսը ասեց նրան. Ճշմարիտ ասում եմ քեզ, Դու այսօր ինձ հետ
դրախտումը կլինես:» Դուկաս 23:43

Այն անհապաղ է: "Այսօր"

Այն փոխհարաբերությունն է: "Ինձ հետ"

Այն հավիտենական է: "Դրախտում"

Այն հաստատ է: "Կլինես"

Ե՞րբ կարող եմ փրկվել

«Ահա հիմա է ընդունելի ժամանակ. ահա հիմա է փրկության օր:»
Բ Կորնթացիս 6:2

«Վասնզի ամեն ով որ Տիրոջ անունը կանչի կապրի:» Հռովմ 10:13

Հաջորդ Կիրակի: Հովիվ Սարո Խաչիկեան
ՄԻՐՈ ԽՈՍՔ